2711

ՕՐԷՆՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

1919 ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 ԵՐԵՒԱՆ № 1

14248

ՅԱՆԿ.

1. Պարլամենտի նախագահութեան ընտրութեան մասին.
2. Մինիստր-նախագահի ընտրութեան մասին.
3. Պարլամենտի փոխ նախագահ Ս. Աբարատեանի հրաժարականն ընդունելու մասին.
4. Կառավարութեան կազմի հաստատման մասին.
5. Զորիներ, սայլեր ու ամունիցիա գնելու համար Զօրական նախարարին 12000000 ր. վարկ բանալու մասին.
6. Վաղարշապատի քնակիչ Դ. Բրուտեանի գործի վերաքննութեան մասին.
7. Պարլամենտի նախագահութեանը 1322580 ր. վարկ բանալու մասին.
8. Կօշիկներ գնելու համար Զօրական նախարարին նախահաշուից դուրս 11700000 ր. վարկ բանալու մասին.
9. Կ. Քեալեանին Դատաստանական Պալատի անդամի պաշտօնում հաստատելու մասին.
10. Ա. Տէր Յակովբեանին Շրջանային Դատարանի անդամի պաշտօնում հաստատելու մասին.
11. Թիֆլիզի քնակիչ նախկին պոռուչիկ Յ. Տէր Սահակեանին ներում շնորհելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ

1. Պարլամենտի նախագահութեան ընտրութեան մասին.

Պարլամենտը օգոստոս ամսի 5-ի նիստում ընտրեց Պարլա-

ՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ

14248

մենտի նախագահ՝—Աւետիս Ահարոնեանին.

Փոխ-նախագահներ { Լևոն Շանթին, Սարգիս Արարատեանին.

Աւագ քարտուղար՝ Յակովբ Տէր Յակովբեանին.

Կրտսեր քարտուղար՝ Արամ Սաֆրաստեան.

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Ա. Սահակեան

Քարտուղար նիստի՝ կրտսերագոյն անդամ Ե. Միրաքեան

1919 թ. Օգոստոսի 6
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

2. Մինիստր-Նախագահի ընտրութեան մասին

Պարլամենտը օգոստոսի 7-ի նիստում Աղէքսանդր Խատիսեանին ընտրեց Մինիստր-Նախագահ և յանձնարարեց նրան կազմել Հանրապետութեան կառավարութիւնը։

Փոխ նախագահ՝ Ս. Արարատեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Օգոստոսի 8
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

3. Պարլամենտի փոխ նախագահ Ս. Արարատեանի հրաժարականն ընդունելու մասին.

Պարլամենտը 1919 թ. օգոստոսի 10-ի նիստում ընդունեց փոխ նախագահ Սարգիս Արարատեանի հրաժարականը։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Օգոստոսի 11
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

4. Կառավարութեան կազմի հաստատման մասին.

Պարլամենտը 1919 թ. օգոստոսի 10-ի նիստում հաւանութիւն տուեց Մինիստր-Նախագահ Ա. Խատիսեանի հրաւիրած կառավարութեան հետևեալ կազմին՝—Մինիստր-Նախագահ և արտաքին գործերի

մինիստր՝ Աղէքսանդր Խատիսեան,

Ներքին գործերի և արդարադատութեան՝ Աբրահամ Գիւլխանդանեան,

Ֆինանսների և պարենաւորման՝ Սարգիս Արարատեան,

Աշխատանքի և խնամատարութեան՝ Աւետիք Սահակեան,

Հանրային կրթութեան և արուեստի՝ Նիկոլ Ադրալեան,

Զօրական՝ գեներալ Խաչատուր Արարատեան։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր-Յակովբեան

1919 թ. Օգոստոսի 11
Երևան։

ՕՐԷՆՔ

5. Զորիներ, սայլեր ու ամունիցիայ գնելու համար Զօրական Նախարարին 12000000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. օգոստոսի 29-ին.

Բանալ Զօրական Նախարարին տասն և երկու միլիոն ռուբլու վարկ անգլիացիներից 600 ջորիներ, 150 սայլեր և ամունիցիայ գնելու համար։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան

Աւագ քարտուղար Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Օգոստոսի 30
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

6. Վաղարշապատի բնակիչ Դ. Բրուտեանի գործի վերաքննութեան մասին.

Պարլամենտը 1919 թ. օգոստոսի 29-ի նիստում որոշեց, որ դատական իշխանութիւնը վերաքննէ Վաղարշապատի բնակիչ և 1918 թ. մարտի 27-ին Էջմիածնի գինուորա-յեղափոխական դատարանի վճռով տաժանակիր աշխատանքների դատապարտուած Դրատատամատ Բրուտեանի գործը։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան

Աւագ քարտուղար Յ. Տէր Յակովբեան

1919 թ. 30 օգոստոսի
Երևան։

ՕՐԷՆՔ

7. Պարլամենտի նախագահութեանը 1,822,580 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 2-ին.

Բանալ Պարլամենտի նախագահութեանը մէկ միլիոն ութը հարիւր քսան երկու հազար հինգ հարիւր ութսուն ռուբլու վարկ՝ սոյն օրէնքին կցուած նախահաշուով. (տես յաւելուած եր. 6—8)։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Սեպտեմբերի 3
Երևան։

ՕՐԷՆՔ

8. Կօշիկներ գնելու համար Զօրական նախարարին նախահաշուից դուրս 11,700,000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած 1919 թ. սեպտեմբերի 5-ին.

Բանալ Զօրական նախարարին նախահաշուից դուրս տասն և մէկ միլիոն եօթ հարիւր հազար ռուբլու վարկ ամերիկացիներից զօրքի համար կօշիկներ գնելու։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան
Աւագ-քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Սեպտեմբերի 6
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

9. Կ. Քեալեանին Դատաստանական Պալատի անդամի պաշտօնում հաստատելու մասին.

Պարլամենտը 1919 թ. սեպտեմբերի 5-ի նիստում՝ Նախարարների Խորհրդի առաջարկութեամբ՝ որոշեց հաստատել Կարապետ

Քեալեանին Դատաստանական Պալատի անդամի պաշտօնում։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան
Աւագ-քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Սեպտեմբերի 6
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

10. Ա. Տէր Յակովբեանին Շրջանային Դատարանի անդամի պաշտօնում հաստատելու մասին.

Պարլամենտը 1919 թ. սեպտեմբերի 5-ի նիստում Նախարարների Խորհրդի առաջարկութեամբ որոշեց հաստատել Արմենակ Տէր Յակովբեանին Շրջանային Դատարանի անդամի պաշտօնում։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Սեպտեմբերի 6
Երևան։

ՈՐՈՇՈՒՄ

11. Թիֆլիզի բնակիչ՝ նախկին պորուչիկ Յ. Տէր Սահակեանին ներում շնորհելու մասին.

Պարլամենտը 1919 թ. սեպտեմբերի 5-ի նիստում որոշեց՝ 1919 թ. յուլիսի 30-ին Զինուորական Դատարանի վճռով սպայի աստիճանից զրկման և մէկ ու կէս տարուայ բանտարկութեան դատապարտուած նախկին պորուչիկ Յարութիւն Տէր Սահակեանին ներում շնորհել, վերականգնելով նրան իր բոլոր իրաւունքների մէջ։

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ
Յ. Արղութեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովբեան

1919 թ. Սեպտեմբերի 6
Երևան։

ՆԱԽԱՀԱՇԻՒ ՀԱՅԱՍ

1919 թ. օգոստոսի 1-ից

ԸՍՏ ՆԱԽԱԳԾԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ

ԾԱԽՔԻ ՅՕԳԻԱԾՆԵՐ.	Հիմնտկտն ռոճիկը.	100 տոկոս յաւելումը.	ԸՆԴԱՄԵՆԸ.
1. Պարլամենտի ծախքեր.			
ա. պատգամաւորների օրապահիկը.	800,000 ր	800,000 ր.	1,600,000 ր.
բ.-Նախագահի ներկայացուցչական ծախքեր	4,500 ր.	. . . .	4,500 ր.
2 Պարլամենտի Դիւանի ծախքեր.			
ա.-Գրասենեակի կազմը	. . . .	. . . .	145,250 ր.
բ.-Գրասենեակային և տնտեսական ծախքեր	67,100 ր.	. . . .	67,100 ր.
3 Շէնքի վարձ.	5,730 ր.	. . . .	5,730 ր.
ԸՆԴԱՄԵՆԸ.	. . . .	. . . .	1,822,580 ր.

ՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

մինչև դեկտեմբեր 31-ը։

ԵՒ ԳՈՐԾՈՂ ՕՐԷՆՔՆԵՐԻ.

ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.

Պարլամենտի ներկայ կազմը բաղկացած է 80 հոգուց. օրապահիկը ըստ 1919 թ. յուլիսի 29-ի օրէնքի իւրաքանչիւրին ամիսը 4,000 ր.

Ըստ 1919 թ. յունիսի 28-ի օրէնքի ամսական 900 ր.

Ըստ 1919 թ. յուլիսի 4 ի օրէնքի. տես յաւելուած-պարլամենտի Դիւանի կազմը։

Ծախքերը հաշուած են Հայաստանի Խորհրդի մի տարուայ գոյութեան ընթացքում տեղի ունեցած ծախքերի միջին քանակն ի նկատի ունենալով։

Գրասենեակային և տպարանական ծախքեր-25,000 ր.-լուսաւորութեան 1750 ր.-ջրի-350 և վառելիքի-40,000 ր.

Ըստ պայմանագրի օրէնքի տարեկան վարձն է 13,750 ր

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԴԻՒԱՆԻ ԿԱԶՄԸ.

№ №	ՊԱՇՏՕՆՆԵՐ	Անձ. թ.	Մի ամսայ հիմնական ռոճիկը	Մի ամսայ 100 տոկոս յաւելումը.	Բոլորին մի ամսայ ընթացքում.	Ընդամենը հինգ ամսայ ընթացքում.
1.	Դիւանապետ. . .	1	1,300 ր.	1,300 ր.	2,600 ր.	13,000 ր.
2.	Կուեստոր	1	850 ր.	850 ր.	1,700 ր.	8,500 ր.
3	Գործավար. . . .	1	850 ր.	850 ր.	1,700 ր.	8,500 ր.
4.	Հաշուապահ. . . .	1	850 ր.	850 ր.	1,700 ր.	8,500 ր.
5.	Արխիւարիուս . .	1	650 ր.	650 ր.	1,300 ր.	6,500 ր.
6	Արձանագրողներ .	6	650 ր.	650 ր.	7,800 ր.	39,000 ր.
7.	Մատենավար. . .	1	650 ր.	650 ր.	1,300 ր.	6,500 ր.
8	Գրամեքենավարներ	3	550 ր.	550 ր.	3,300 ր.	16,500 ր.
9.	Սպասաւորներ. .	4	400 ր.	450 ր.	3,400 ր.	17,000 ր.
10.	Պահապան	1	400 ր.	450 ր.	850 ր.	4,250 ր.
11.	Սուրհանդակներ. .	2	400 ր.	450 ր.	1,700 ր.	8,500 ր.
12.	Դռնապաններ . . .	2	400 ր.	450 ր.	1,700 ր.	8,500 ր.
	ԸՆԴԱՄԵՆԸ. .		. . . . .	. . . . .	29,050 ր.	145,250 ր.

Ի ս. Պառլամենտի Նախագահի՝ Յ. Արղութեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014689